ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՓՈՍՏԻՑ

ՀԵՆԶԵԼ ՄԿՈՅԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՐԿԱՐԱԿԵԺՈՒԹՅԱՆ ԳԱՂՏՆԻՔԸ

Քաղաքականություն գալ եւ քաղաքական գործունեություն ծավալել շատերն են փորձում: Սակայն նրանցից քչերին է հաջողվում հասնել իրենց նպատակին, իսկ այդ քչերից էլ առավել քչերն են կարողանում ամրանալ քաղաքականությունում եւ ծավալել երկարատեւ ու նպատակային գործունեություն իրենց սկզբունքների, տեսակների, ինչպես նաեւ ժողովրդանպաստ ծրագրերի ու որոշումների ընդունման գործում:

Այդ քչերից մեկն է նաեւ Նինոծմինդայի մունիցիպալիտետից Վրաստանի խորհրդարանի մեծամասնական պատգամավոր Հենզել Մկոյանը: Քաղաքական աշխատանքի մեծ փորձ չուներ: Սակայն, շատ արագ տիրապետեց քաղաքական եւ պետական գործունեության առանձնահատկություններին, ձեռք բերեց համապատասխան փորձ եւ հմտություն, որի վկայությունն է նրա վերջին 16-ամյա անդամակցությունը Վրաստանի խորհրդարանին:

Չեմ ուզում մանրամասն թվարկել Հենզել Մկոյանի նախաձեռնությամբ եւ անմիջական աջակցությամբ մունիցիպալիտետի տարածքում կատարված աշխատանքները, դրանք բազմաթիվ բնակավայրերի ջրագծերն են, տասնյակ կիլոմետրերի հասնող ասֆալտապատ ճանապարհներն ու կոյուղիները, վերանորոգված ժամանակակից կահավորված արարողությունների տները, լուսավոր փողոցներն ու մարզահրապարակները եւ այլ կենցաղային ու տնտեսական օբյեկտներ:

Այս ամենի հետ մեկտեղ, նրա ուշադրության կենտրոնում են մունիցիպալիտետի բնակչության անձնական խնդիրների լուծումը: Քանի քանիսն են մեր խորհրդարանականի աջակցությամբ լուծել իրենց անձնական հիմնախնդիրները, հաճախ նաեւ նրա սեփական միջոցների հաշվին:

Այսքանից հետո, բնականաբար, հարց է առաջանում՝ ինչումն է Հենզել Մկոյանի քաղաքական երկարակեցության գաղտնիքը քաղաքական դաշտում, հատկապես՝ երկրում առկա բուռն քաղաքական պրոցեսների պայմաններում: Դա, առաջին հերթին, նրա կողմից պետական քաղաքականության ճիշտ գնահատումն է, քաղաքական շրջահայացությունն ու ճիշտ կողմնորոշումը, պետական ու ժողովրդի շահերի ճիշտ համատեղումը, մարդկանց օգտակար լինելու ցանկությունը, ինչպես նաեւ արկածախնդրության բացակայությունը, ժամանակից եւ իրադարձություններից առաջ չընկնելը, եւ լուծում պահանջող հարցերը համապատասխան մարմիններում ժամանակին եւ սկզբունքորեն բարձրացնելը:

Ժողովուրդը չորս անգամ քվեարկել է նրա օգտին, համոզված եմ, եթե նա մասնակցի առաջիկա ընտրություններին, անպայման հաղթողը ինքը կլինի, քանի որ ժողովուրդը երբեք չի սխալվի:

ԱՆԴՐԱՆԻԿ ՔՍՊՈՅԱՆ
Նինոծմինդայի մունիցիպալիտետի իրավաբանական ծառայության պետ

ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

ԴՅՈՒՐԱՑՎԵՑ ՀՈՂԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՆՑՈՒՄԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Այսօրվա դրությամբ, չափանախագծերում առկա անճշտությունները հաճախ դառնում են հողի գրանցման արգելակիչ գործոն, այսինքն՝ միմյանց վրա տարածվելու պատճառով, վերջին հինգ տարվա ընթացքում հանրային ռեեստրը ստիպված կանգնեցրել է մոտ 56 հազար գրանցման գործ, իսկ հարցը ներկա դրությամբ հնարավոր է կարգավորել միայն դատարանի միջոցով, ինչը քաղաքացիներից ժամանակ ու լրացուցիչ ծախսեր է պահանջում:

Այդ հիմնախնդիրների պատճառը չափանախագծային գործունեության ոլորտում անճշտություններն էին, քանի որ այն իրականացնելու իրավունք էր տրված ցանկացողին: Հաճախ կադաստրային նախագիծը կատարվում էր առանց գրասենյակից դուրս գալու, արդյունքում՝ կազմվում էր մոտավոր նախագիծը, ինչը արգելակում էր հողի գրանցման գործընթացը եւ խախտում սեփականատիրոջ իրավունքները:

Նախագծի շրջանակներում առաջարկած փոփոխությունների արդյունքում, չափանախագծային գործունեությունը ենթարկվեց հավաստագրման, եւ արդարադատության նախարարի հրամանագրով հաստատվեց չափանախագծի միասնական չափորոշիչը: Չափանախագծի գործունեության համար կսահմանվի սակագին (մաքս): Հանրային ռեեստրի ազգային գործակալության ներկայացուցիչը իրավասու է տեղում ստուգել գրանցման համար ներկայացված կադաստրային նախագծում ներկայացված տվյալների ճշտությունը: Հավաստագրված չափանախագծերն իրականացնող ցանցը կհիմնվի երեք ամսում, իսկ հավաստագրումը կառնչվի այն չափանախագծողներին, ովքեր կմասնակցեն նախագծին: Նախաձեռնության արդյունքում առավել պաշտպանված կլինեն ինչպես հողի սեփականատերերի, այնպես էլ՝ չափանախագծողների իրավունքները: Հավաստագրված չափանախագծողները կգիտենան, թե ինչպես են իրականացնելու չափանախագծումը առանց մոտավոր հաշվումների, ինչը նվազագույնի կհասցնի «միմյանց փարման» հնարավորությունը եւ սեփականության նկատմամբ դատական վեճի ծագման ռիսկը, միաժամանակ առավել պահանջարկ կվայելի որակյալ չափանախագծողի աշխատանքը: Միաժամանակ, կառավարությունը կմշակի հողի որոշակի տարածքի չափման սակագնի ֆինանսավորման համապատասխան մեխանիզմը:

Օրենսդրական հաջորդ փոփոխությունն այն է, որ պետությունը քաղաքացուն օգնություն կցուցաբերի սեփականությունը հաստատող փաստաթղթերի որոնումներում:

Ներկա դրությամբ, քաղաքացին հողի գրանցման ժամանակ պարտավոր է գրանցող մարմնին ներկայացնել բոլոր փաստաթղթերը, որոնք վերաբերում են հողի նկատմամբ նրա սեփականության հաստատմանը: Իսկ փաստաթղթերում սխալների առկայության դեպքում, հանրային ռեեստրը մերժում է գույքի գրանցումը: Փաստաթղթերի նորովի պատրաստումը եւ առկա սխալների ուղղումը հողի սեփականատիրոջ պարտավորությունն է, այլ կերպ նրա սեփականության իրավունքը չի վավերացվի:

Կառավարության կողմից հաստատված փոփոխությունների համաձայն, հանրային ռեեստրը գրանցման գործընթացում դառնում է համամասնակից: Փաստաթղթերի, այդ թվում՝ արխիվային փաստաթղթերի որոնման հարցում հանրային ռեեստրը օգնություն է ցուցաբերում քաղաքացուն, ավելանում է նաեւ այն փաստաթղթերի թիվը, որոնց հիման վրա հնարավոր կլինի իրականացնել հողի գրանցումը:

Փոփոխությունների համաձայն, գույքի գրանցման մերժման պատճառ կարող է լինել միայն փաստաթղթերում առկա նշանակալից սխալը: Աննշան շեղումները, մասնավորապես, սեփականատիրոջ անուն-ազգանվան անհամապատասխանությունը տառերով, սխալ գրանցումը եւ այլն, չեն դառնա հողի գրանցման արգելակիչներ, եթե անձի մյուս նույնականացման տվյալները (օրինակ՝ անձնական համարը, բնակության հասցեն եւ այլն) միմյանց համապատասխանում են: Սույն հարցն առանձնապես նշանակալից է ազգային փոքրամասնություններով հոծաբնակ տարածաշրջանների համար:

Բացի այդ, կիրականացվի շեղումներ ունեցող փաստաթղթերի ազատականացումը, կներկայացվի փաստերի հանրագումարումը: Պետությունը եւ տեղական ինքնակառավարումը սերտորեն կհամագործակցեն սեփականության սահմանման բաժնում, ինչը կհիմնավորվի համապատասխան օրենսդրական փոփոխություններով:

Օրենսդրական հաջորդ նշանակալից փոփոխություններից է նաեւ այն, որ պետությունը կօգնի կարգավորել սեփականատերերի վեճը:

Հողի բարեփոխման շրջանակներում առաջարկված փոփոխությունների արդյունքում, պետությունը քաղաքացուն կառաջարկի վեճի կարգավորման շուտափույթ եւ էժան մեթոդ: Մեդիատորների, այդ թվում՝ նոտարական ծառայության միջոցով, պետությունը քաղաքացիներին սեփականության շուրջ ծագած վեճերի դյուրին, առանց դատական միջամտության կարգավորման օգնություն կցուցաբերի: Վեճի դեպքում, քաղաքացիներին կտրվի հնարավորություն օգտվել այդ կարգավորումից կամ դիմել դատարանին եւ այնտեղ պաշտպանել սեփական իրավունքները:

Պետական նախագծի շրջանակներում կատարված աշխատանքները (փաստաթղթերի որոնումը եւ համակարգումը, նոտարի կողմից պայմանավորվող կողմերի ստորագրությունների ստուգումը, մեդիացիան, ինքնակամ զբաղեցրած հողամասի նկատմամբ սեփականության իրավունքի ճանաչումը, փաստերի հանրագումարումը) կկատարվեն անվճար, հողի գրանցումը կամ հողամասի նկատմամբ սեփականության իրավունքներում փոփոխությունները կիրականացվեն առանց հանրային ռեեստրի սպասարկման սակագնի վճարման:

ԱՐՎԵՍՏԻ ԱՇԽԱՐՀՈՒՄ

ՌԵԼԻԵՖԱՅԻՆ ԳԵՂԱՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՒՆԱՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍ «ՀԱՅԱՐՏԱՆԸ»

Թբիլիսիի «Հայարտուն» կենտրոնում կայացավ Հայաստանի մշակույթի վաստակավոր գործիչ, պրոֆեսոր, գյումրեցի տաղանդավոր գեղանկարիչ Սուսաննա Մկրտչյանի ռելիեֆային գեղանկարչության 35 նմուշների ցուցահանդեսը: Նա թբիլիսցի արվեստասերներին էր ներկայացրել իր ռելիեֆային աշխատանքները, հիմնականում «Ծաղիկներ» նկարաշարը: Աշխատանքներն ստեղծվել են գունավոր թղթերի եւ ներկերի միջոցով:

Նշենք, որ նկարչուհին ցուցահանդեսներ է ունեցել աշխարհի 36 երկրներում:

Վրաստանի հայ նկարիչների միության նախագահ Մերուժան Շահումյանը, նկարիչ-խեցեգործ Լեւոն Օսիպովը, նկարչուհի Իռենա Օհանջանովան, «Հայարտուն» կենտրոնի տնօրեն Լեւոն Չիդիլյանը, Վիրահայոց թեմի մամլո խոսնակ Սուսաննա Խաչատրյանը արժեւորեցին գյումրեցի նկարչի ստեղծագործական լայնահուն ներկապնակը:

* * *

«Հայարտուն» կենտրոնի Գալուստ Գյուլբենկյան սրահում անցավ թբիլիսահայ մանրանկարչուհի Գոհար Հակոբյանի «Հայտնիների անհայտ էջերի» մասին պատմող սլայդների ցուցադրությունը: Հեղինակը այս անգամ արվեստասեր հասարակայնությանն էր ներկայացել Հայաստանի Վայոց ձորի, Արագածոտնի եւ Սյունիքի մարզերի եկեղեցիների ու պատմական հուշարձանների՝ իր կողմից արված լուսանկարների ցուցադրությամբ, որոնք ուղեկցվում էին դրանց մասին պատմող հետաքրքիր պատմություններով: Ներկաների վրա առանձնապես մեծ տպավորություն թողեցին 13-րդ դարի Գլաձորի համալսարանի լուսանկարներն ու այդ համալսարանի պատմության մանրամասները: Ցուցադրվեց նաեւ 13-14-րդ դարերի կառույց Ծաղկավանքը (Սպիտակավանք), որտեղ հանգչում է ազգային հերոս Գարեգին Նժդեհի (1886-1955) աճյունի մի մասը:

Միջոցառման ավարտին օրհնության եւ գնահատանքի խոսքով հանդես եկավ Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը:

ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

ԿՐԹԱԿԱՆ

ՎՐԱՍՏԱՆԻ ՏԱՐՎԱ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՑԻՉ՝ ՆԱՆԵ ՀՈՎՍԵՓՅԱՆԸ

ՄԱՅՐԱՔԱՂԱՔՈՒՄ ԿԱՅԱՑԱՎ «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ» ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ

Նանե Հոսեփյան

Թբիլիսիում տեղի ունեցավ քաղաքացիական կրթության մանկավարժական համաժողովի 5-րդ գիտաժողով-ցուցահանդեսը:

Գիտաժողովի ծրագիրը բաղկացած էր մի քանի մասից: Նախ մասնակիցներն ու հյուրերը դիտեցին քաղաքացիական կրթության ուսուցիչների կողմից կատարված աշխատանքների պատրաստած տարեկան հաշվետվությունը՝ լուսանկարների տեսքով: Այնուհետեւ համաժողովի մասնակիցներին ողջունեցին Վրաստանի կրթության եւ գիտության նախարարի տեղակալ Լիա Գիգաուրին, «Քաղաքացիական կրթություն» առարկայի ծրագրի տնօրեն Մարինե Ուշվերիձեն եւ ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության ներկայացուցիչ Նինո Բուաչիձեն: Համաժողովի շրջանակներում՝ 400-ից ավելի ուսուցիչներ ծանոթացան կրթության ոլորտում ակնկալվող փոփոխություններին եւ ծրագրերին: Գիտաժողովի հերթական մասում պարգեւատրվեցին «Քաղաքացիական կրթություն» առարկայի տարվա լավագույն, հաջողակ ուսուցիչները եւ տարվա քաղաքացիական կրթության ակտիվ ակումբը: Պարգեւատրման շրջանակներում հաղթող ուսուցիչներին տրվեցին շնորհակալագիր-պատվոգրեր եւ «Քաղաքացիական կրթության տարվա լավագույն ուսուցիչ» մրցանակ:

Գիտաժողով-ցուցահանդեսը տեղի ունեցավ քաղաքացիական կրթության «Ապագայի սերունդ» ծրագրի շրջանակներում, որը իրականացնում է PH international կազմակերպությունը: Այն համագործակցում է համաժողովի եւ տարածաշրջանային կառավարական եւ ոչ կառավարական մի շարք կազմակերպությունների հետ: Ծրագրին ֆինանսական օգնություն է ցուցաբերում ԱՄՆ միջազգային զարգացման գործակալությունը (USAID), իսկ Սամցխե-Ջավախեթիում համագործակից կազմակերպություն է հանդիսանում Ախալցիխեի երիտասարդական կենտրոնը:

Սամցխե-Ջավախեթիի «Քաղաքացիական կրթության տարվա լավագույն ուսուցիչ» մրցանակը տրվեց Նինոծմինդայի շրջանի Հեշտիա գյուղի Վիկտոր Հովսեփյանի անվան թիվ 1 հանրային դպրոցի ուսուցիչ Նանե (Բեռնիկ) Հովսեփյանին: Հեշտիայի Վիկտոր Հովսեփյանի անվան թիվ 1 հանրային դպրոցը արդեն երկրորդ տարին է, ինչ ակտիվ համագործակցում է քաղաքացիական կրթության շրջանակներում գործող կազմակերպությունների հետ, որոնք իրենց օգնությունն են ցուցաբերում դպրոցին՝ ուսումնական պրոցեսն ավելի արդյունավետ ու հետաքրքիր դարձնելու նպատակով:

Դպրոցն էլ՝ Բեռնիկ Հովսեփյանի ղեկավարությամբ եւ դպրոցի ուսուցչակազմի, աշակերտների ակտիվ մասնակցությամբ, ինչպես նաեւ քաղաքացիական կրթության «Առաջին քայլեր» ակումբի օժանդակությամբ իրականացնում է առարկայի շրջանակներում առաջադրվող բոլոր ակտիվությունները: Այսօր արդեն դպրոցը բազմաթիվ նախագծերի հաղթող է ճանաչվել:

Նշենք նաեւ, որ «Քաղաքացիական կրթության տարվա հաջողակ ուսուցիչ» անվանակարգում մրցանակը տրվեց Ասպինձայի Նաքալաքեվի համայնքի հանրային դպրոցի ուսուցիչ Նանա Մաղրաձեին, իսկ «Քաղաքացիական կրթության ակտիվ ակումբ» անվանակարգում՝ Բորժոմիի Իվանե Ջավախիշվիլու անվան անհատական դպրոցի ուսուցիչ Մայա Գուլիաշվիլուն:

Դպրոցն իր երախտիքն է բերում բոլոր նրանց, ովքեր ներդրում ունեցան այս նախագծում, մասնավորապես՝ Քաղաքացիական կթության համաժողովի Սամցխե-Ջավախեթիի ներկայացուցիչ Նինո Նադիրաձեին, Ախալցիխեի երիտասարդական կենտրոնի տնօրեն Մարինե Սուլդաձեին եւ կենտրոնի աշխատակազմին, PH international-ի եւ Ամերիկայի միջազգային զարգացման գործակալության (USAID) վարժանքների եւ հետազոտությունների կենտրոնի քաղկրթության ասոցացված վարժող Նինոծմինդացի էլմիրա Քսպոյանին:

Մենք երջանիկ ենք, որ դուք մեր կողքին եք եւ մեր փայլուն հաղթանակը ձեր հաղթանակն է նաեւ:

ՍԻՄՈՆ ԿԻԼԱՋԵ

ԱՏԵՍՏԱՏՆԵՐԸ ԿՀԱՆՁՆՎԵՆ ՀՈՒՆԻՍԻ 20-Ի՞Ց

Դպրոցների շրջանավարտներին, ովքեր հաջողությամբ են հանձնել ավարտական քննությունները, ատեստատների հանձնումը կսկսվի հունիսի 20-ից:

Փաստաթղթի ստացման համար, շրջանավարտը պետք է դիմի պետական սպասարկումների զարգացման գործակալության ցանկացած տարածքային ծառայությանը կամ՝ արդարադատության տան մասնաճյուղին: Եթե շրջանավարտն ատեստատը չի ստանում հունիսի 20-ից մինչեւ տարեվերջ, ապա հաջորդ տարի նրան կտրվի ընդհանուր կրթությունը հաստատող փաստաթղթի պատճենը: Փաստաթուղթը կարող է ստանալ անմիջականորեն շրջանավարտը կամ նրա ներկայացուցիչը՝ համապատասխան կարգով ձեւակերպված վստահագրի հիման վրա:

ՀՐԱՊԱՐԱԿՎԵԼ Է ՄԻԱՍՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

Վրաստանի կրթության եւ գիտության նախարարության գնահատման եւ քննությունների ազգային կենտրոնը հրապարակել է միասնական ազգային քննությունների ժամանակացույցի վերջնական տարբերակը:

Այսպիսով, քննությունների ազգային կենտրոնի տվյալներով, կատարված փոփոխություններով հանդերձ, միասնական քննությունների ժամանակացույցի վերջնական տարբերակը հետեւյալն է. հուլիսի 1-2-ին՝ առաջին եւ երկրորդ նստաշրջան՝ վրաց լեզու եւ գրականություն, հուլիսի 4-5-ին՝ առաջին եւ երկրորդ նստաշրջան՝ ընդհանուր ունակություններ, հուլիսի 6-7-ին՝ առաջին եւ երկրորդ նստաշրջան՝ անգլերեն, հուլիսի 6-ին՝ առաջին նստաշրջան՝ ռուսերեն, հուլիսի 6-ին՝ երկրորդ նստաշրջան՝ ֆրանսերեն, հուլիսի 7-ին՝ երկրորդ նստաշրջան՝ ռուսերեն, հուլիսի 7-ին՝ առաջին նստաշրջան՝ գերմաներեն, հուլիսի 12-ին՝ երկրորդ նստաշրջան՝ քաղաքացիական կրթություն, հուլիսի 14-ին՝ առաջին նստաշրջան՝ մաթեմատիկա, հուլիսի 15-ին՝ առաջին եւ երկրորդ նստաշրջան՝ աշխարահագրություն, հուլիսի 18-ին՝ առաջին եւ երկրորդ նստաշրջան՝ պատմություն, հուլիսի 19-ին՝ առաջին նստաշրջան՝ գրականություն, հուլիսի 20-ին առաջին նստաշրջան՝ կենսաբանություն, հուլիսի 21-ին՝ առաջին նստաշրջան՝ կերպարվեստ եւ կիրառական արվեստ, հուլիսի 21-ին՝ առաջին նստաշրջան՝ քիմիա, հուլիսի 22-ին՝ առաջին նստաշրջան՝ ֆիզիկա:

Նշենք, որ միասնական ազգային քննությունների համար գրանցվել է ավելի քան 41500 դիմորդ:

ՕԶՆԵԾԻ ԱՆԱՀԻՏ ՀԱՆԵՍՅԱՆԸ՝ «ԷՏԱԼՈՆԻ» ԵԶՐԱՓԱԿՉՈՒՄ

Մայիսի 20-ին Թբիլիսիի սպորտի մարզապալատում անցկացվեց Վրաստանի ամենալայնածավալ տասնամյա փորձ ունեցող հանրակրթական «Էտալոն-2016» նախագծի եզրափակիչը: Միջոցառմանը ներկա էին Վրաստանի կրթության եւ գիտության նախարարության բարձրաստիճանավորները, Թբիլիսիի քաղաքապետ Դավիթ Նարմանիան, երկրի օրենսդիր մարմնի եւ դիվանագիտական կորպուսի ներկայացուցիչները:

«Էտալոնի» եզրափակիչ մրցույթին մասնակցեցին Վրաստանի բոլոր մունիցիպալիտետների եւ Թբիլիսիի տասը շրջանների 82 մասնակիցներ ու մոտ 7 հազար երկրպագուներ: Եզրափակչի արդյունքում ի հայտ եկան երեք հաղթող աշակերտները: Մրցույթում հաղթանակած աշակերտը պարգեւի տեսքով ստացավ 20 հազար լարի, երկրորդ տեղին տրվեց 6 հազար, իսկ երրորդին՝ 4 հազար լարի:

Եզրափակչին նախորդեց միջոցառում, որի ընթացքում «Էտալոն-2016»-ի մասնակիցները ելույթ ունեցան բանաստեղծություններով, կատարեցին ազգային երգեր ու պարեր:

«Էտալոն-2016» եզրափակիչ մրցույթին, Մուխրան Մաճավարիանու բանաստեղծության ընթերցմամբ, ելույթ ունեցավ Ծալկայի մունիցիպալիտետի Օզնի գյուղի հանրային դպրոցի տասներորդ դասարանի աշակերտուհի Անահիտ Հանեսյանը: Նշենք, որ Անահիտի ընթերցած բանաստեղծությունը լայն ընդունելության արժանացավ ունկնդիրների կողմից, իսկ ավարտին նրա կողմից արված «Կեցցե՞ միասնական ամբողջական Վրաստանը» կոչը, արժանացավ բուռն ծափահարությունների:

Վերոնշյալը կրկին անգամ ընդգծում է այն, որ օրեցօր հայալեզու աշակերտներն առավել են տիրապետում վրաց լեզվին եւ դրա համար նրանց մոտ առկա է շարժառիթ, գիտակցում պետական լեզվի իմացության նշանակության մասին:

ՄԻՐԱՆԴԱ ԻԱԿՈԲԻՁԵ
Օզնիի հանրային դպրոցի վրաց լեզվի ուսուցչուհի

ՄՇԱԿՈՒՅԹ

ՀԱՄԵՐԳ՝ «ՁԱՏԿԻՃ ՄԻՆՉԵՎ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ» ՓԱՌԱՏՈՆԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

ԹԲԻԼԻՍԻՈՒՄ ԿԱՅԱՑԱՎ ԱՇԽԱՐՀԱՀՈՉԱԿ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԴԱՇՆԱԿԱՀԱՐ ՍԵՐԳԵՅ ԲԱԲԱՅԱՆԻ ՄԵՆԱՀԱՄԵՐԳԸ

Թբիլիսիի պետական կոնսերվատորիայի Մեծ դահլիճում, «Ձատկից մինչեւ համբարձում» միջազգային երաժշտական փառատոնի շրջանակներում, տեղի ունեցավ աշխարհահռչակ դաշնակահար Սերգեյ Բաբայանի մենահամերգը: Վերոնշյալ փառատոնը թվով 11-րդն էր, որը մայիսի 5-ից մինչեւ հունիսի 9-ը անցկացվեց Թբիլիսիում, Կախեթիի, Սվանեթիի եւ Աջարիայի տարածաշրջաններում, որտեղ ներկայացվեցին միջազգային դասական երաժշտության վրաց ճանաչված կոմպոզիտորների ստեղծագործությունները: Ավանդույթի համաձայն, փառատոնին հնչեցին նաեւ Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Երկրորդի կողմից գրված ստեղծագործությունները:

Սերգեյ Բաբայանը առաջին անգամ չէ, որ ելույթ է ունենում Թբիլիսիում: Այս անգամ կատարեց Բախի ստեղծագործություններից՝ իր կատարյալ տեխնիկայով հիացմունք պատճառելով ունկնդիրներին:

Սերգեյ Բաբայանը ծնվել է Հայաստանում, պրոֆեսիոնալ երաժիշտների ընտանիքում: Վեց տարեկանում նրա երաժշտական ուսուցչուհին Լուիզա Մարգարյանն էր, իսկ ավելի ուշ՝ Երեւանի կոնսերվատորիայի պրոֆեսոր Գեւորգ Սարաջեւը: Ապա նա ուսումը շարունակեց Մոսկվայի կոնսերվատորիայում, նրան դասավանդում էին հանրաճանաչ Լեվ Վասենկոն, Միխայիլ Պլետնեւը, Լեվ Նաումովը:

Արդեն երկար տարիներ Սերգեյ Բաբայանն ապրում է ԱՄՆ-ում: Նա ԱՄՆ-ի, Ճապոնիայի, Շոտլանդիայի միջազգային մի շարք մրցույթների դափնեկիր է, ելույթ է ունեցել աշխարհի խոշորագույն նվագախմբերի հետ, հյուրախաղերով հանդես եկել եվրոպական երկրներում ու Ճապոնիայում, մշտապես մասնակցել է միջազգային նշանակալից փառատոնեերին: Նրա ձայնասկավառակները լայն հետաքրքրություն են առաջացրել երաժշտասերների շրջանում: Վերջին տարիներին հաջողությամբ զբաղվում է դիրիժորությամբ:

ԱՐՏԵՄ ԳՐԻԳՈՐԵՆՑ

Նկարում.- Սերգեյ Բաբայանը (ձախից) Օթար Տատիշվիլու եւ Հովհաննես Մանուկյանի հետ:

ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ՎՐԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆ ՏԱՆՈՂ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԸ ԿՀԻՄՆԱՆՈՐՈԳՎԻ

Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական (Մ-6) ճանապարհի շուրջ 90 կմ երկարությամբ հիմնական տարանցիկ մայրուղու հիմնանորոգման եւ վերակառուցման ծրագիրն ընթացքի մեջ է: Ծրագիրը ֆինանսավորվելու է Եվրոպական ներդրումային բանկի եւ Ասիական զարգացման բանկի կողմից, որի արժեքը 102 մլն եվրո է:

Ծրագրի նպատակն է հիմնանորոգել եւ վերակառուցել Հայաստանի մայրաքաղաքը Վրաստանի հետ կապող Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման հիմնական տարանցիկ մայրուղին:

Վանաձոր -Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական ճանապարհն սկսվում է Վանաձոր քաղաքից, անցնում է Հայաստանի Լոռու եւ Տավուշի մարզերի թվով 33 համայնքներով (167 419 ընդհանուր բնակչությամբ)՝ հասնում մինչեւ Բագրատաշենի սահմանակետ: Վանաձոր քաղաքի տարածքում կիհմնանորոգվի 6.7 կմ, Վանաձոր-Ալավերդի հատվածում՝ մոտ 43.9 կմ, Ալավերդի քաղաքի տարածքում՝ 3.4 կմ, Ալավերդի-Վրաստանի սահման հատվածում՝ մոտ 36.3 կմ ճանապարհ:

Շինարարական աշխատանքները նախատեսվում է ավարտել 32 ամսում: Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական ճանապարհին նախատեսվող շինարարական աշխատանքներն աննախադեպ են: Ծրագիրը ֆինանսավորելու համաձայնություն է ձեռք բերվել Եվրոպական ներդրումային բանկի եւ Ասիական զարգացման բանկի հետ: Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում ճանապարհը փակվելու է: Այդ նպատակով անցած տարի հիմնովին նորոգվել է Ստեփանավանով անցնող շրջանցիկ ճանապարհը: Այդ ուղղությամբ այլ շրջանցիկ ճանապարհների վերաբերյալ կտրվի լրացուցիչ տեղեկատվություն:

ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆԸ ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ ՄԱՏՈՒՅՑԵՑ ՊԵՏԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԻՉ ԱՆԴՐԱՆԻԿ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Հունիսի 12-ին Հայաստանի նախկին վարչապետ Անդրանիկ Մարգարյանի ծննդյան օրվա կապակցությամբ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը, ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանի հետ եւ Հայաստանի բարյդրագույն ղեկավարության ուղեկցությամբ, այցելեց Կոմիտասի անվան այգու պանթեոն՝ հարգանքի տուրք մատուցեց պետական, քաղաքական գործչի հիշատակին:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ՌԱԶՄԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՀԱՐՑԵՐՆ ԷԻՆ

Հայաստանի պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի գլխավորած պատվիրակությունը, հունիսի 15-ին, մասնակցեց Մոսկվայում կայացած ԱՊՀ մասնակից պետությունների պաշտպանության նախարարների խորհրդի (ԱՊՀ ՊՆԽ) հերթական նիստին:

ԱՊՀ-ի ՊՆԽ նիստի օրակարգի համաձայն, դիտարկվել է շուրջ 20 հարց՝ բազմակողմ ռազմական համագործակցության հետագա կատարելագործման ուղղությամբ:

ԱՊՀ ՊՆԽ նիստի շրջանակներում, նույն օրը կայացել է Հայաստանի պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի առանձնազրույցը ՌԴ պաշտպանության նախարար, բանակի գեներալ Սերգեյ Շոյգուի հետ: Երկու երկրների պաշտպանական գերատեսչությունների ղեկավարները քննարկել են պաշտպանության ոլորտում համագործակցության ամրապնդման, ռազմատեխնիկական գործակցության ընդլայնման, ինչպես նաեւ երկուստեք հետաքրքրություն ներկայացնող հարցեր՝ միտված ռազմավարական դաշնակցային հարաբերությունների հետագա խորացմանը:

ՀԱՅԱՍՏԱՆԸ՝ ՄԱԿ-Ի ԳԼԽԱՎՈՐ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ ՓՈԽՆԱԽԱԳԱ

Միավորված ազգերի կազմակերպությունը (ՄԱԿ) փակ քվեարկության միջոցով Հայաստանը ընտրել է որպես Գլխավոր ասամբլեայի փոխնախագահ: Փոխնախագահ են դարձել եւս 20 երկիր:

Հայաստանն ընտրվել է Արեւելյան Եվրոպայի երկրների շարքից: ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի փոխնախագահ երկրների շարքում Արեւմտյան Եվրոպայից ընտրվել են Բելգիան եւ Գերմանիան: 21 փոխնախագահների թվում են նաեւ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի հինգ մշտական անդամները՝ Չինաստան, Ֆրանսիա, Ռուսաստան, Միացյալ Թագավորություն եւ Միացյալ Նահանգներ:

ԼՐԱՑՈՒՑԻՉ 22 ՄԻԼԻՈՆ ԴՈԼԱՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ՝ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Ինչպես տեղեկացրել է Արժույթի միջազգային հիմնադրամը, կազմակերպության տնօրենների խորհուրդը հաստատել է Հայաստանի տնտեսության վերաբերյալ իր առաքելության երրորդ հաշվետվությունը, ֆինանսական օգնության շրջանակներում, ինչը թույլ կտա երկրին լրացուցիչ ստանալ 22 մլն դոլար:

Հաշվետվության համաձայն՝ երկիրը կատարել է տրված վարկի եւ բարեփոխումների ընթացքի գծով իր ստանձնած պարտավորությունները:

Այսպիսով կավարտվի 71,5 մլն դոլարով Հայաստանի ֆինանսական օգնության եռամյա ծրագիրը:

«Չնայած դժվարին արտաքին պայմաններին, ծրագրի կատարումը միանգամայն գոհացուցիչ է, նպատակների մեծ մասը կատարված է»,- տնօրենների որոշումը բացատրել է ԱՄՀ-ի փոխտնօրեն Միցուհիրո Ֆուրուսավան:

ԱԶԴԱՐԱՐՎԵՑ 2016 ԹՎԱԿԱՆԻ «ԱՐԻ ՏՈՒՆ» ԾՐԱԳՐԻ ՄԵԿՆԱՐԿԸ

Հունիսի 13-ին տեղի ունեցավ «Արի տուն» ծրագրի 2016թ. առաջին փուլի բացման հանդիսավոր արարողությունը, որին մասնակցեցին Հայաստանի սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը, նախարարության աշխատակիցներ, հյուրեր:

Ծրագրի շրջանակում 2016թ. նախատեսված է 1100 սփյուռքահայ երիտասարդի այց Հայրենիք: Ինչպես նախորդ տարիներին, ծրագիրը դարձյալ կընթանա 8 փուլով՝ հունիսի 13-ից օգոստոսի 27-ը: Այս տարի եւս «Արի տուն»-ը կունենա քառօրյա ճամբարային ծրագիր, որը կկազմակերպվի Ծաղկաձորում:

Ծրագրի բացմանը խոսքով հանդես եկավ Հայաստանի սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը:

Ազդարարելով «Արի տուն» ծրագրի մեկնարկը՝ Հայաստանի սփյուռքի նախարարը, ավանդույթի համաձայն, ամենակրտսեր մասնակցին՝ 14-ամյա Գեւորգ Բաղդասարյանին (Սիրիա) հագցրեց «Արի տուն» ծրագրի տարբերանշանով շապիկն ու գլխարկը եւ հանձնեց պայուսակը:

Այնուհետեւ ցուցադրվեց «Արի տուն» ֆիլմը: Իրենց կատարումներով ներկաներին ողջունեցին Մարիանա Սահիրադյանը եւ Հայկ Եսայանը:

Ծրագրի առաջին փուլին կմասնակցեն 42 պատանիներ ու աղջիկներ, որոնցից 20-ը՝ Հայաստան տեղափոխված սիրիահայեր են, 22 մասնակիցները՝ ՌԴ-ից, Բելառուսից, Թուրքմենստանից եւ ԱՄՆ-ից:

ՆԱՏՕ-Ի ՇԱՐԺԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՒՄԲԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հունիսի 6-10-ը Հայաստանում էր գտնվում ՆԱՏՕ-ի շարժական ուսումնական խումբը: Այցելության շրջանակում խմբի անդամները հյուրընկալվել են ՀՀ ՊՆ Ռազմական ոստիկանությունում:

Հայաստանի ՊՆ Ռազմական ոստիկանության վարչության պետ, գեներալ-մայոր Սամվել Ղուկասյանի հետ հանդիպման ընթացքում քննարկվել են երկկողմ հետաքրքրություն ներկայացնող հարցեր, համագործակցության հետագա զարգացման հեռանկարները:

Այցելության շրջանակում Ռազմական ոստիկանության անչնակազմի հետ կազմակերպվել եւ անցկացվել են դասընթացներ, ներկայացվել են դասախոսություններ ՆԱՏՕ-ի ռազմական ոստիկանության համակարգի կառուցվածքի, գործառույթների իրավական շրջանակների, օրենքի գերակայության ապահովման, հետաքննության անցկացման, ինչպես նաեւ ռազմագերիների ու ներկալված անչանց նկատմամբ վարվելակերպի կանոնների վերաբերյալ:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՈՒՄ

Հունիսի 16-ին Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեի նախագահ Գագիկ Ծառուկյանն ընդունեց Եվրոպայի առաջնությունից վերադարձած մարմնամարզության Հայաստանի հավաքականին՝ գլխավոր մարզիչ Հակոբ Սերոբյանի գլխավորությամբ:

ՀԱՕԿ նախագահը շնորհավորեց հայ մարզիկներին եւ Հայաստանի 20-րդ դարի լավագույն մարզիկ Ալբերտ Ազարյանին՝ Եվրոպայի առաջնությունում գերազանց արդյունք գրանցելու համար:

Մարմնամարզության Եվրոպայի առաջնությունում Հայաստանի հավաքականի անդամները նվաճել են 1 ոսկե եւ 3 արծաթե մեդալ: Նժույգթափեր վարժությունում Եվրոպայի չեմպիոն դարձավ Հարություն Մերդինյանը: Երիտասարդների մրցապայքարում արծաթե մեդալ էր նվաճել Արթուր Ավետիսյանը:

ՎԱԽՃԱՆՎԵԼ Է ՕՖԵԼՅԱ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԸ

Հունիսի 13-ին, 91 տարեկան հասակում, կյանքից հեռացավ ՀԽՍՀ ժողովրդական արտիստուհի, երաժշտարվեստի երախտավոր Օֆելյա Համբարձումյանը:

Օֆելյա Կարապետի Համբարձումյանը ծնվել է Երեւանում: Դեռ վաղ տարիքից մասնակցել է պիոներ-դպրոցականների քաղաքային պալատի ժողովրդական նվագարանների անսամբլի աշխատանքներին՝ իր զրնգուն ձայնով գերելով ունկնդիրներին:

Ապագա երգչուհին սովորել եւ ավարտել է Ռ.Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանն ու հրավիրվել ռադիոյի ժողովրդական նվագարանների համույթ՝ մի ամբողջ կյանք ապրելով այստեղ, մի ամբողջ կյանք նվիրելով Արամ Մերանգուլյանի գլխավորած համույթին:

Երգչուհու երգացանկն ընդգրկում է հիմնականում հայ ժողովրդական, գուսանական եւ աշուղական, ինչպես նաեւ կոմպոզիտորական երգեր: Երգչուհու ստեղծագործության մեջ առաջնային տեղ են գրավել Սայաթ-Նովայի ստեղծագործությունները: Համերգներով հանդես է եկել ԱՊՀ քաղաքներում, արտասահմանյան հայաբնակ վայրերում (Լիբանան, Սիրիա, Եգիպտոս, Ֆրանսիա, ԱՄՆ): Օֆելյա Համբարձումյանի հուղարկավորությունը կայացավ հունիսի 16-ին, Երեւանի Կոմիտասի անվան պանթեոնում:

ՀԻՇԱՏԱԿԻ ԽՈՍՔ

ՀՐԱԺԵՇՏ՝ ԲԱՆԱՍՏԵՂԾ ՄԻՔԱՅԵԼ ԱԽՏՅԱՆԻՆ

Հայ գրական ընտանիքը մի տաղանդավոր բանաստեղծով եւս որբացավ. Թբիլիսիում, կարճատեւ հիվանդությունից հետո իր մահկանացուն կնքեց Հայաստանի եւ Վրաստանի գրողների միությունների, Վրաստանի Հայ գրողների «Վերնատուն» միության վարչության անդամ, նրա հիմնադիրներից, արդի վիրահայ գրականության ճանաչված դեմքերից մեկը՝ Միքայել Ախտյանը:

Ծնվել է 1938 թվականին, Վրաստանի Թեթրիծ-ղարոյի շրջանի Դաղեթ-Խաչեն հայաբնակ գյուղում: Հենց հայրենի բնությունն ու նրա անթիվ գեղեցկություններն էին սնել Ախտյանի հոգեաշխարհն ու երեւակայությունը եւ դեռեւս պատանեկան տարիներից, արդեն Թբիլիսիի բնակիչ, նրան կապել պոեզիայի հետ:

Գրական մկրտությունը Միքայել Ախտյանը ստացել էր Վրաստանի գրողների միության հայկական մասնաճյուղի նախագահ, մեծանուն գրող Բենիկ Սեյրանյանի անմիջական հովանու ներքո, ով վաղ էր նկատել նրա բանաստեղծական բնատուր շնորհը ու ճանապարհ տվել նրա գրական ընթացքին: Եվ չնայած Ախտյանը այլ մասնագիտություն ուներ՝ ավարտել էր Մոսկվայի թեեւ արդյունաբերության ինստիտուտը, բայց նրա հոգին անմնացորդ շնչում էր պոեզիայով, գրականությամբ, ինչին հավատարիմ մնաց մինչեւ կյանքի վերջ:

Միքայել Ախտյանի գրական երախայրիքը Թբիլիսիի «Մերանի» հրատարակչությունում լույս տեսած «Կապույտ երազ» ժողովածուն էր՝ դեռեւս 1970-ական թվականներին, որ հաջորդել էր նույն հրատարակչությունում լույս տեսած «Վեցաձայն խմբերգ» ժողովածուի մեջ նրա առաջին ներկայացմանը ընթերցողին: Մինչ այդ էլ նրա ստեղծագործությունները տպագրվում էին «Վրաստան» թերթում, «Կամուրջ» տարեգրքում: Ավելի ուշ նա սկսեց տպագրվել նաեւ Երեւանում՝ պարբերականներում եւ առանձին գրքերով:



Բեղմնավոր գրող էր Միքայել Ախտյանը: Նա մեր գրականությանը ժառանգեց շուրջ քսանհինգ բանաստեղծական ու թարգմանական ժողովածուներ: Մեծ է նրա վաստակը նաեւ հայ-վրաց գրական կապերի հարստացման պատմության մեջ. նա վրացերենից հայերեն է թարգմանել մի շարք վրացի մեծանուն գրողների ստեղծագործություններ, այդ թվում՝ Մորիս Փոցխիշվիլու, Մուխրան Մաճավարիանու, այլոց, իսկ առանձին գրքերով Թբիլիսիում եւ Երեւանում հրատարակել Դավիթ Մճեդլուրու, Նոդար Գուրեշիձեի, Գենո Կալանդիայի եւ Մուրման Լեբանիձեի բանաստեղծական ժողովածուները: Միքայելի ստեղծագործական գործունեության լուրջ գնահատականներից է նրա ստեղծագործությունների վերլուծությունների «Բանաստեղծի ժողովածուների հետքերով» գիրքը՝ վիրահայ գրականագետ, բանասիրական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր Էմմա Ախտյանի հեղինակությամբ:

Նրա վաստակը գնահատվել է ըստ արժանվույն. Վրաստանի բարձրագույն քաղաքացիական պարգեւի՝ «Պատվո» շքանշանի ասպետ էր եւ Հայաստանի գրողների միության «Գրական վաստակի համար» մեդալակիր: Տարիները նրա վրա չէին ազդել, եւ նա, արդեն ապրելով ե'ւ Երեւանում, ե'ւ Թբիլիսիում, ծառայելով իր երկու հայրենիքներին, շարունակում էր հայ գրական անդաստան բերել քնարական ու խոհափիլիսոփայական շնչով իր հայրենասիրական, սիրային, քնարական, նաեւ մանկական հիանալի բանաստեղծություններ ու քառյակներ, եւ տրտմելով հանդերձ աշխարհի բազմապիսի անկում-վայրէջքներով, շարունակում որոնել լավն ու բարին, գեղեցիկն ու վեհը, ճշմարիտը եւ աշխարհին նայել լավի, բարու, մաքրության եւ ճշմարտության դիտանկյունից...

...Այս հայացքով էլ նա հունիսի 12-ին վերջին անգամ փակեց իր աչքերը՝ ո'չ ինքը զգալով մահվան սարսափը, ո'չ էլ շրջապատին զգացնել տալով, որ ինքը գնում է արդեն, գնում դեպի հավերժություն՝ որպես Հավերժի երախտավոր ճամփորդ...

Ընդամենը մի քսան օր առաջ նա Թբիլիսիի հայոց թատրոնում հրաժեշտի խոսք ասաց՝ դերասանուհի Լեյլա Մկրտչյանի հոգեհանգստի ժամանակ... Իսկ հիմա նույն թատրոնի բեմից իր մասին ասացին հրաժեշտի սրտառուչ խոսքեր հայ եւ վրաց գրողներն ու հասարակական գործիչները՝ Մաղվալա Գոնաշվիլին, Ժորա Սնխչյանը, Գիվի Շահնազարը, Գենո Կալանդիան, Վան Բայբությանը, Անահիտ Բոստանջյանը, Էմմա Ախտյանը, Վիրահայոց թեմի առաջնորդ Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը: Ընթերցվեցին նաեւ ցավակցական հեռագրեր Հայաստանի գրողների միությունից, Հայաստանի սփյուռքի նախարարությունից:

Իսկ Թբիլիսիի Հայ գրողների ու հասարակական գործիչների պանթեոնում մի թարմ շիրմաթումբ էլ ավելացավ հունիսի 16-ին՝ Միքայել Ախտյան (1938-2016):

Գնաս բարով մեր հին ու բարի, միշտ հյուրընկալ մեր տաղանդավոր բարեկամ...

ԱՆԱՀԻՏ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ
Վրաստանի գրողների միության հայկական մասնաճյուղի նախագահ

Գնաս բարով, բարեկամս

Թանկագինս, դու ապրեցիր, որ ապրենք, ապրեցիր, որ քո քարի, քո ծառի տերեւի գույնը մեզ հասցնես, հասցնես քո մտքի թռիչքը քո հոգով ու հարստացնես մեր հոգիները: Հարստացան մեր հոգիները, ու շատ քիչ է պատահում, որ տողերով հարստանում է մարդը:

Անքուն գիշերներդ ողողված են եղել պոեզիայով: Դու գրկել ես նրանց, ինչպես մանուկին են գրկում, իսկ մենք այդ պահին քեզ հետ չէինք, դու մենակ էիր՝ մի կտոր ամպի ու մի կտոր հողի հետ: Քեզ հետ էր նաեւ քո հոգին ու քո միտքը...

Հիմա դու կաս, կաս, որովհետեւ եղել ես մեծերի ճանապարհին, ճանապարհ, որը միշտ հարթ չի լինում, ու այդ ճանապարհը վերջ չունի, վերջ չունես եւ դու, չունի վերջ քո տողը, տողիդ հազարավոր գույնը: Նրանք անմահ են...

Դու այլ կերպ էիր խոսում բնության հետ, ոչ բոլորի նման, բարի լույսին՝ բարի լույս էիր ասում, բարի գիշերին՝ բարի գիշեր: Քո լեզուն այլ էր, քո լեզուն թռչող թռչուն էր, թեկուզ մեկ-մեկ վիրավոր թեւ ուներ: Դու վիրավոր թեւդ չէիր բուժում, թողնում էիր ամպերին, որ ամպերը գային, գրկեին քո վիրավոր թեւը, որ վերքդ անցներ: Վերքից չէիր խուսափում, միշտ աշխատում էիր ճանապարհին ընկած քարը ինքդ բարձրացնես, չմտածելով, որ ձեռքդ կարող էր քարի տակ մնալ: Քարի տակ եթե մնար էլ, միեւնույն է՝ այնտեղ էլ պոեզիա կստեղծեիր, որովհետեւ ձեռքը հոգու մասնիկ է: Հենց դա է քո հրաշալի էությունը, բարեկամս: Չգիտեմ, մարդը մահանում է, թե ոչ, կամ ինչ է մահը: Դու նրա հետ կապ չունես, նա չէր կարող բռնել քո թռիչքը:

Ինչ լավ է, որ մենակ չես եղել, մենակությունը մահից էլ սարսափելի է, թեպետ սարսափն ու դու միմյանց օտար էիք: Երջանիկ ես, որ մնացիր քո ընթերցողի, քո հարազատների, քո գետի, ծառի, մորենու ու այն ամպերի հետ, որոնք շոյելու են քո թռչող թեւերը: Շոյելով տանելու են դեպի անմահություն՝ հենց նրա համար, որ դու չընթերցված տող չունեցար:

Կարոտելու ենք քեզ ու կարոտի պահին գրկելու ենք քո տողերը:

Գնաս բարով, բարեկամս:

ԱՐՄԵՆ ԲԱՅԱՆԴՈՒՐՅԱՆ
Թբիլիսիի Պ.Ադամյանի անվան պետհայդրամայի թատրոնի գեղարվեստական ղեկավար

ԽԱՉԲԱՌ



ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 6.Խելագար: 8.Դժվարանցանելի ընդարձակածավալ փշատերեւ անտառային գոտի: 10.Թանգարան Փարիզում: 11.Զարմանքի արտահայտություն: 13.Վրաց Շինարար թագավոր: 14.Պետություն Արեւելյան Եվրոպայում: 16.Էլեկտրոտեխնիկայի ֆիրմա: 17.Թատերական անձնավորում: 18.Թթի բուժիչ թանձր հյութ: 20.Անգլիական ազնվական տիտղոս: 21.Աշակերտ, ուսանող: 22.Ընկճված, հուսալքված: 26.Ավագ քահանա: 28.Կտոր, մաս: 31.Ոչ մեծ լայնություն ունեցող: 32.Գին, արժեք: 34.Արջուկ «Թուխը»: 35.Բոլշեւիկյան թերթ: 36.Հայ իշխան ... Ամրամ: 38.Նավի խոհարար: 41.Դավուրմա: 43.Ժողովրդական վրիժառու: 45.Ոտքի ծալվելու տեղը: 48.Ծուռ, թեք: 49.Ժողովրդական թատրոնի եւ գրականության տեսակ XIV-XVI դդ. արեւմտաեվրոպական երկրներում: 52.Սթափ: 53.Մուտք: 54.Դերասանուհի Դեմի ...: 55.Նավակը վարելու գործիք: 56.Արու ոչխար: 57.Վրացու «հորեղբայրը»: 58.Մեքենայի մակնիշ: 59.Կղզային պետություն Ասիայում՝ Հնդկական օվկիանոսում ... Լանկա: 60.Դատարկ, ունայն:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Ձայնային ինֆորմացիայի հաղորդման եւ ընդունման սարք: 2.Դունչ: 3.Գերի, ծառա: 4.Գնահատող հանձնաժողով: 5.Ծխախոտի անուն: 7.Բանաստեղծ, պատմաբան Ղեւոնդ ...: 9.Մարդու գեղձային օրգան: 12.«Տատիկն ... մի ուլիկ»: 15.Բեմահարթակով փոքր ռեստորան: 19.Սեղանի խաղ: 23.Կոթնելու ծառայող մաս, աթոռի կռնակ: 24.Պատշաճ, ինչպես հարկն է: 25.Հավը՝ տապակած: 27.Թել, զսպանակ: 29.Եվրամիության անդամ երկրների տարադրամը: 30.Ինչպե՞ս: 32.Եկեղեցական անոթ, որի մեջ լցնում են գինի՝ Պատարագի ժամանակ նվիրագործելու համար: 33.Փիլիսոփա, մարքսիզմի հիմնադիր ... Մարքս: 37.Թել մանելու գործիք, ճախարակ: 39.Հասարակական տրանսպորտի սպասատեղ: 40.Գրող, գրականագետ ... Սեւակ: 41.Վարակիչ հիվանդություն: 42.Հեծելազոր: 44.Երկկենցաղ կենդանի: 46.Իսրայելական ինքնաձիգ: 47.Նախկինում Վրաստանի կրթության եւ գիտության նախարարի տեղակալ ... Սեփերթելաձե: 50.Տարին 12-ի բաժանող միավոր: 51.Ցուցական դերանուն:

Կազմեց ԷԼԼԱ ԱԹԱԲԵԿՅԱՆԸ

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 1.Հավասի: 6.Ահեղ: 9.Մասիս: 11.Առարկա: 13.Ցայգ: 15.Ածխաթթու: 17.Մարզ: 18.Տարտու: 21.Ոստան: 23.Արիս: 24.Ատ: 26.Կոլումբիա: 29.Գիշեր: 30.Տեգ: 33.Ալրոտ: 35.Ալկո: 36.Վաթսուն: 37.Նալ: 39.Դոն: 41.Կոդ: 42.Ֆա: 43.Թամազ: 46.Անի: 47.Վիզ: 50.Իսկ: 51.Մոտակա: 54.Սիլվա: 56.Սազան: 57.Դիանա:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 2.Ազատ: 3.Առկա: 4.Իմ: 5.Կիրթ: 7.Հաագա: 8.Կարատ: 10.Արաքս: 12.Ածու: 14.Գազազ: 16.Գտա: 19.Արփա: 20.Ուրմիա: 21.Ոսկե: 22.Տալ: 24.Աբել: 25.Տիգրան: 27.Որսկան: 28.Մտածկոտ: 31.Դավիթ: 32.Բաթումի: 34.Տուլա: 35.Անդ: 38.Աֆրիկա: 40.Որակ: 44.Ձվիադ: 45.Մի: 47.Վազք: 48.Ձանի: 49.Կիմ: 52.Ոսկ: 53.Տա: 55.Նա:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աթոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan@caucasus.net

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445